ԳՊՀ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2026-2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Հարգելի՛ դիմորդներ, տեղեկացնում ենք, որ Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի 2026-2027 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելությունը կկազմակերպվի ս. թ. հունիսի 5-ից մինչև սեպտեմբերի 1-ը:

Ընդունելությունն իրականացվում է հետևյալ մասնագիտություններով՝

1. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
2. Պատմություն
3. Հայոց լեզու և գրականություն
4. Ռուսաց լեզու և գրականություն
5. Անգլերեն լեզու և գրականություն
6. Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/
7. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
8. Տնտեսագիտություն
9. Իրավագիտություն
10. Համակարգչային ճարտարագիտություն
11. Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում
12. Կենսաբանություն
13. Աշխարհագրություն
14. Բնապահպանություն և բնօգտագործում

Դիմում-հայտի հետ անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. անձը հաստատող փաստաթուղթը և պատճեն,
2. բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակն ու պատճենը,
3. ինքնակենսագրություն,
4. երաշխավորագիր ֆակուլտետի խորհրդից (նախորդ տարիների շրջանավարտները երաշխավորագրեր չեն ներկայացնում),
5. զինվորական ծառայության առնչության վերաբերյալ փաստաթուղթը և պատճեն (առկայության դեպքում),
6. հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ (առկայության դեպքում),
7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթուղթը և պատճեն (առկայության դեպքում՝ հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք, եթե հավակնորդը I կամ II խմբի հաշմանդամ է, մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողազուրկ, զոհված զինծառայողի երեխա լինելու մասին փաստաթղթեր):
8. 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
9. ընդունելության ծառայությունների համար սահմանված 3000 (երեք հազար) ՀՀ դրամի վճարի անդորրագիր (փոխանցումը կատարել ցանկացած բանկից՝ «ՎՏԲ Հայաստան» բանկ ՓԲԸ Կամո մ/ճ 16021100146800 հաշվեհամարին)

Կից ներկայացնում ենք ԳՊՀ մագիստրատուրայի ուսման վարձավճարի չափերը՝ ըստ մասնագիտությունների: